Խոսրով Անձևացուց առաջ։ Վերջինիս մասին Անանիա Մոկացին առումէ. «Քանզի [ի] ՆԳ (954) թուականիս և ի Դիման ամի մերոյ դիտաւորութեանս յարեաւ ոմն յեպիսկոպոսաց մերոց Խոսրով անուն, որում հաւատացեալ էր մեր նմա զվիճակն Անձևացեաց. այր համեստ և գիտաւոր, և ալեօք ծերութեամբ զարդացեալ. յանկարծակի իբրև ի դիւական հոգւոյն շարժեալ, առանց իւրիք հակառակութեան, սկսաւ նախ զբարբառն գեղակի արձակել ըստ յունարէն լեզուոյն զկիրակէն կիւրիակէ կոչել և զՆերսեսաղէմ՝ Եռուսաղէմ և որ սոցին նման է՝ ի սոյն յառեալ բարբառ։ Իսկ զկնի այսորիկ ապա այլ յառաջեաց բաջարմունս անհեղեղս. քանզի հրամայէր մինչև մօրուս եկեալ՝ զգլուխ խուզել մանկանց, թէ այսր աղազաւ կոչի կըտրիճ. և զկնի մորուացն զհերսն ապա թողուլ երկայնել և մանել ցսրունսն, զի այսր աղազաւ կոչին մանուկ։ Եւ այս երկարեալ առանգամ մի, ապա և յեկեղեցի եմոյծ զբաջարմանն իւրոյ զդայան, քանզի յաղագս քրիստոսեան խաչին այսպէս ասէր, թէ Ամն խաչն որ քահանայքն աւրհնեն և այլ զոր ոչ աւրհնեն, միապատիւ է և աւելորդ դաւրհնելն վարկանիմ։ Եւ յայսոսիկ ներեալ մեր նմա, ապա սկաւ այլ իմն նոր հերձուած աւանդել, մուծանել յեկեղեցի աստուծոյ, քանզի ասէր. Մի պատիւ և մի փառք հրեշտակաց և հրեշտակապետաց, ըստ նմին՝ մի փառք և մի պատիւ հայրապետին և եպիսկոպոսին... և զբանդ «կոչումն» լուծումն ասէր և ոչ կրկին պատիւ հայրապետութեանն։ Եւ առաւել քան զսոյն ի նոյն միտ յաւել, զոր աղաչեալ մեր բազում անգամ՝ դառնալ նմա [յ]այնմ անուղղայ և մտախաբ խորհրդոց, զոր թէև արտասուօք իսկ խնդրեցաք, սակայն ոչ կամեցաւ ուղղել, զոր հարկեալ ի հրամանէ այ կարել հրեղէն սրովն և դրաժինն ընդ կեղծաւորսն գնել, որ և զնոյն թօշակ տարաւ առ հանդերձեալսն պաշար կորստեան, զի ոչ զղջացաւ մինչև ի վերջին շունչն, վասնորոյ հարկեցաք զրել զայս մնացական կտակ առ յապա եկեղոցն, զի զգուշասցին յայնպիսի ընդվայրապած չնութեանց և ուղղութեամբ նկատեսցեն զաւելորդ առ հանդերձեալ կեանսն, զի շատ է աւուրն չար իւր» (Անան. Մոկացի. Պատմաւ յաղագս զԽոսրով Նզովելոյն. անտիպ։ Տէս. և Կիրակոս պատմ. և Ուռպելեան)։

Անանիա Մոկացու, Անանիա Նարեկացու և Արամի անտիպ գրուածքները կհրատարակուին մի հատորով կամ առանձին առանձին. ըստ յարմարութեան, երբ այդ ինձ հնարաւոր կը լինի։ Տես և իմ հր. «Գիր Խոստով...»

ՄԻՔԱԷԼ.

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

ՔԱՂՈՒԱԾՔ Ի ԿՈՆԴԱԿԱՑ ՎԵՀ. ՀԱՅՐԱՊԵՏԻ.

Կոնդակ օրհնութեան Վեհափառ Հայրապետի ազգիս ընդ համարաւ 461 առ Մարգար Պոպովի, որով գովէ զազգօգուտ և զգսպելի ինքնայօժար ձեռնարկ նուիրաբերութեան նորա միոյ հոյակապ տան արժողութեամբ քան հազար բուբլեաց ի նպաստ ծխական դարոցաց Հայոց Սատարապատ քաղաքի, ի մէնանդեանուոր յիշատակ Պոպովեան տանն։ 18 նոյեմ. 1893։

*
* *

Կոնդակ օրհնութեան Վեհափառ Հայրապետի ազգիս ընդ համարաւ 470 առ Սահակ, Յովհաննէս, Դիկոզայոս և Աթանաս Յամշարեան եղբարս, որով գովէ զկրօնասիրութիւն և զազգասիրութիւն ոսոյս ապացուցեալս արդեամբք և գործովք իսկ, առաքելով 17000 բուբլիս ի տնօրինել զարժանն վասն կրթութեան Հայազն մանկանց։ 19 նոյեմ.։

*
* *

Կոնդակ օրհնութեան Վեհափառ Հայրապետի ազգիս ընդ համարաւ 471 առ Նոր-Նախիջևանցի ազգային բնակեալս ի Մոսկուա, որով

յայտնէ թէ հաճութեամբ սրտի ընկալեալ է զգումարն 300.) ռուբլեաց ի ձեռն Լիմանուէլի Պօղոսի՝ ի նպաստ բաղմատեսակ կարեաց Մայր Աթոռոյս։ 20 Նոյեմ.

*
* *

Կոնդակ օրհնութեան Վեհափառ Հայրապետի ազգիս ընդ համարաւ 492 առ Գաւառնակիրն Իւր Սահակ Ծ. վարդապետ Այվազեան՝ որով շնորհէ նմա լանջախաչ վարդապետական ի նշան բարձր գոհունակութեան Իւրոյ։ 30 Նոյեմ.

*
* *

Կոնդակ օրհնութեան Վեհափառ Հայրապետի ազգիս ընդ համարաւ 517 առ Տիկին Տիրուհի Մ. Բարսաուլեան՝ որով օրհնէ զյիշատակ բարեպաշտ առն նորա սակս կատակելոյն ռուբլիս չորս հարիւր ի տարւոջ՝ զմի քառորդ մասն արգեանցն յերկուց կալուածոց իւրոց՝ հասուցանել ամի ամի ի նպաստ Վարագայ ս. Նշան վանուց։ 11 Դեկտ.

*
* *

Կոնդակ օրհնութեան Վեհափառ Հայրապետի ազգիս ընդ համարաւ 655 առ ազգայինս Վարշավա քաղաքի՝ որով յայտնէ զգոհունակութիւն Իւր առ առաքումն 400 ռուբլեաց յօգուտ Ս. Աթոռոյս։ 27 Դեկտ.

*
* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի ազգիս ընդ համարաւ 628 առ Սուրիաս եպիսկոպոս Պարզեան՝ Առաջնորդ Ատրպատականի՝ որով շնորհէ նմա զԱրքեպիսկոպոսական պատիւ։ 27 Դեկտ.

*
* *

Կոնդակ օրհնութեան Վեհափառ Հայրապետի ազգիս ընդ համարաւ 659 առ Բագուայնակ ազնուուհի Տիկին Եղիսաբեթ Սարգսեան՝ որով օրհնէ զյիշատակ բարեպաշտ առն նորա Պօղոսի Սարգսեան՝ սակս կատակի 5000 ռուբլեաց՝ ի բանալ ծխական դրպրոց իմն ի Հացի գեղջ և կարգէ զՏիկինն խնամակալուհի նորաբացելի դպրոցին։ 27 Դեկտեմ.։

*
* *

Կոնդակ օրհնութեան Վեհափառ Հայրապետի ազգիս ընդ համարաւ 11 առ Սիմէոն Պառաւեան որ ի Շուլավէր՝ որով գրաւատէ զնա սակս կառուցանելոյն սեպհական ծախիւքն օրիորդական դպրոց և ապահովելոյն մշանջենապէս և թոյլատրէ անուանել զուսումնարանն Գայիանեան՝ յանուն տիկին Գ. Պառաւեանի և յետ մահուանն՝ Գայիանեան—Պառաւեան։ 10 յուն. 94։

*
* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի ազգիս ընդ համարաւ 107 առ Պատ. Հոգաբարձութիւն ս. Փրկչեան Հիւանդանոցի Կ. Պոլսոյ՝ ի պատասխանի շնորհաւորական գրոյն ուղղեալ առ Ինքն ի մուտս Նոր տարւոյ՝ որով օրհնէ զգործս ձեռաց նոցա՝ զամենայն պաշտօնեայս՝ զհիւանդս և զտնանկս և միանգամայն զանմահ յիշատակ հոգելոյս Բարերարաց Հասատութեանն և պատուիրէ յարատևել ի ջան և ի գործ առ ի բեղմնաւորել զսահանձեալ գործն կարի մարդասիրական։ 8 Փետր։

*
* *

Կոնդակ օրհնութեան Վեհափառ Հայրապետի ազգիս ընդ համարաւ 108 առ Գերապատիւ Մաղաքիա եպիսկոպոս Օրմանեան և առ բարեշնորհ երկոտասան սարկաւագունս որ ի Դպրեվանս Արմաշու՝ ի պատասխանի ուղերձի՝ որով գովէ զնպատակ նոցա և յորդորէ լինիլ յարատևող ընթացիչ նախնեաց մերոց՝ շահել զկեանս բարի և ազգօգուտ գործովք ի փառս ազգի և Հայաստանեայց Եկեղեցւոյ՝ որ կարօտի զարդիս անձնուէր հովուաց։ 8 Փետր։

*
* *

Կոնդակ օրհնութեան վեհափառ Հայրապետի ազգիս ընդ համարաւ 160 առ Պատրիկ էֆէնտի Կիւլպէնկեան, որով մխիթարէ զզգացեալ սիրտ համայն Կիւլպէնկեան գերդաստանի ընդ տարաժամ մահ Յովհաննէս էֆ․ի և Տիկնոջն որոց մաղթէ յաւիտենական հանգիստ և մնացելոց կեանս երկարս և յաջողակս ի լինիլ արժանաւոր ժառանգ Կիւլպենկեան առաքինի գերդաստանին։ 15 փետր․

*
* *

Կոնդակ վեհափառ Հայրապետի ազգիս՝ առ Առաջնորդն Վրաստանի և Իմէրէթի Գեր․ Գէորգ եպիսկոպոս Սուրէնեան, որով հրամայէ վարել զգործ և զընտրութիւն Հոգաբարձուաց Մարիամեան—Յովնանեան ուսումնարանին ըստ բացարձակ տրամադրութեան կոնդակի Երջանկայիշատակ Հայրապետին Գէորգայ Դ․ի առանց այլ իրիք կարգադրութեանց և չեղմանց։ Համար 247։ փետր․ 25։

*
* *

Կոնդակ վեհափառ Հայրապետի ազգիս ընդ համարաւ 276 առ պարոն Եփրեմ Տատուրեան, որով յայտնէ նմա զիւրն գոհունակութիւն, սակս նուիրաբերութեանն նորագոյն տեսակի լամպայից ի գործածութիւն Գէորգեան ճեմարանի Մայր Աթոռոյս։ 2 Մարտ։

*
* *

Կոնդակ օրհնութեան վեհափառ Հայրապետի ազգիս ընդ համարաւ 311 առ ազգայինս Վաղարշապատ քաղաքի որով յայտնէ թէ հաճութեամբ սրտի ընկալեալ է զգումարն 490 րուբլեաց, զառաքեալն ի նպաստ սովելոց Տաճկա-Հայաստանի։ 10 Մարտ։

*
* *

Կոնդակ վեհափառ Հայրապետի ազգիս ընդ համարաւ 357 առ առաջնորդն Վրաստանի և Իմէրէթի Գէորգ եպիսկոպոս Սուրէնեան, որով յայտնէ նմա զկարգումն Համազասպ վարդապետի ի նախանդամութիւն Կոնսիստորիային Տփխեաց և ի վանահայրութիւն ս․ Սարգիս եկեղեցւոյն, ի տեղի Անանիա վարդապետի, որ պաշտօնիւ փոխանորդութեան փոխադրեցաւ յԱխալցխա ըստ հրամանի Նորին Վեհափառութեան։ 17 Մարտ։

*
* *

Կոնդակ վեհափառ Հայրապետի ազգիս ընդ համարաւ 391 առ Գէորգ քահանայ Զաքարեան Եկատերինոդար քաղաքի, որով շնորհէ նմա իրաւունս կրելոյ սեաւ ծաղկեայ փիլոն և կամիլաւկա անուանեալ գլխարկն թաւշեայ ի վարձատրութիւն անձնուէր ծառայութեանց իւրոց և ըստ թախանձանաց ժողովրդեան։ 25 Մարտ։

*
* *

Կոնդակ վեհափառ Հայրապետի ազգիս ընդ համարաւ 409 առ Գրիգոր քահանայ Մաղինեան, միաբան Կաթուղիկէ եկեղեցւոյ Տփխեաց, որով շնորհէ նմա իրաւունս կրել զգլխարկն կամիլաւկա ի տրիտուր ազգօգուտ վաստակոց և ըստ խնդրանաց ժողովրդեան։ 29 Մարտ։

*
* *

Կոնդակ վեհափառ Հայրապետի ազգիս ընդ համարաւ 445 առ Գրիգոր քահանայ Տէր Բարսեղեան, միաբան ս․ Աստուածածին եկեղեցւոյ Բեթհեղեմի Տփխեաց, որով շնորհէ նմա զպատիւ Աւագ քահանայութեան, ի տրիտուր հաւատարիմ ծառայութեանց նորա ըստ վկայութեան և միջնորդութեան Գեր․ Առաջնորդի տեղւոյն։ 6 ապրիլ։

*
* *

Կոնդակ վեհափառ Հայրապետի ազգիս ընդ համարաւ 46 առ վիճակային Կոնսիստորիայն Վրաստանի և Իմէրէթի, որով թոյլ տայ կանգնել զմահարձան ի վերայ շիրմի հանգուցեալ Մկրտչի Սանասարեան, ըստ նկարին մատուցանելոյ ի Գէորգայ Եւանգուլեանէ։ 17 յուն․։

*
* *

Կոնդակ օրհնութեան վեհափառ Հայրապետի ազգիս ընդ համարաւ 315 առ Պատ. ազգային Եկատերինոդար քաղաքի, որով գովէ զնոսա սակս նուիրաբերութեան 520 ռուբլեաց յօգուտ սովելոց Ցանկահայաստանի։ Մարտի 10։

*
* *

Կոնդակ վեհափառ Հայրապետի ազգիս ընդ համարաւ 455 առ կոյս Հռիփսիմէ Թայիրեան, որով յաժարութեամբ սրտի տայ նմա իրաւունս դիմել առ բարեպաշտ Տիկնայս և ըստանալ զկամաւոր նուէրս ի պայծառութիւն գերահռչակ վանիցն Սրբոց Յակոբեանց որ յԵրուսաղէմ։ 16 նոյեմ. 1863 ամի։

ՔԱՂՈՒԱԾՔ Ս. ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ*.

17. Յունուարի. Մինօդն Ս. Լիզմիածնի ընտրեց Նորին Վեհափառութեան ս. Կոնդակն ի 11 յունուարի թ. 18, որով Նորին Օծութիւնն հրամայեց արձակել Վանական Կառավարութեան նախկին անդամոց, որոնց պաշտօնավարութեան ժամանակը լրացած էր, և նոցա տեղը կարգել ի պաշտօն նախագահի Գեր. Ներսէս եպիսկոպոս Խուդավերդեանին և անդամներ բարեշնորհ Անտոն վ. Վարդապետեանին, արժ. Թադէոս աբեղայ Ռուբէնեանին և շնորհ. Յուսիկ սարկ. Զոհրապեանին։ Ըստ որում Խոր Վիրապի վանահայր կարգել բար. Հմայեակ վ. Ցէր-Սարգսեանին, կարմիր վանքը—բար. Վահրամ վ. Ալկունուն։

Ս. Մինօդը էջ. Նորին Վեհափառութեան հրամանի իրագործումը։

—

24 յունուարի. Մինօդն Ս. Լիզմիածնի ըստ յայտարարութեան Կոնսիստ. Հայոց Արցախի ի 4 Սեպտ. 1893. թ. 1273, որով խնդրում է վաւերական համարել Առաջնորդի Սուրբ Յարութիւնեանի պատկը խնամութեան հինգերորդ աստիճանի մէջ, հրամայէց վաւերական ճանաչել ըստ բարձր բարեհաճութեան Նորին Վեհափառութեան։

—

26 յունուարի 1894։ Մինօդն Ս. Լիզմիածնի հիմնուելով Ասարխանի Կոնսիստորիայի ի 22 Դեկտ. անցեալ ամի թ. 2633 միջնորդութեան վրայ, հրամայեց թոյլ տալ երեցփոխանին ս. Աստուածածին աւագ եկեղեցու՝ ծախսել եկեղեցական դրամից 600 ռ. դիակառք պատրաստելու համար։

—

Մինօդն Ս. Լիզմիածնի ըստ յայտարարութեան Կոնսիստորիային Բեսարաբիոյ ի 7 Դեկտեմբերի 1893 ամի թ. 2518, թոյլատրեց նորան՝ համաձայն խնդրանաց մեծ. միտուլիարնից սօվետնիկ Սերովբէի Գ. Միսերեանց Սիմֆերոպոլցու՝ ընդունել յիշեալ բարերարի նուիրած երկու տունն՝ արժողութեամբ 5500 ռ. ի սեփականութիւն ս. Աստուածածին եկեղեցու Սիմֆերոպոլ քաղաքի։

—

16 փետրուարի. Մինօդն Ս. Լիզմիածնի ըստ յայտարարութեան Կոնսիստ. Հայոց Տփխիսի ի 19 յունիսի 1891 ամի թ. 2170 Խաչատուր Ա. Վարդանեանց՝ Մշուշ գաւառի Շնեատ գիւղացու կրկնամուսնութեան համար, որով վերջինս փոխել է իւր անունն ի Խաչատուր Յուսիկեան Ցէր Գալստեանց, պսակուել է 1877 թուին Հալաբարցի Համբարձում Ալլավերդեանի Հռիփսիմէ անուն 15 տարեկան դրստեր հետ և 1888 թուին թողելով իւր ամուսնուն, հեռացել է իւր Հայրենիքն և վերըստին պսակուել համագիւղացի օր. Պասկ Յակոբեանի հետ իբրև ամուրի ոմն, որի հետ ապրում է և այժմ դրեթէ խելագարութեան վիճակում, ինչպէս վկայում է Ցարոնի առաջնորդը 7 Մայիսի 1891 ամի թուով 451.— հրամայէց զրել Ամենապատիւ Պատրիարքին Կ. Պոլսոյ և անվաւեր հրատարակել յիշեալ անձի ապօրինի պսակն և ձգել նորան օրի-

* Բոլորովին մասնաւոր հանգամանքներ մինչև այժմ խանդարեցին պաշտօնականների հրատարակութիւնը։